

վրա է «մենք» և «նրանք» մեր էթնիկ ինքնագիտակցության մեջ¹:
Նախ ի՞նչ է անձի ինքնագիտակցությունը և ապա՝ էթնիկ ինքնագիտակցությունը կամ էթնիկ ինքնությունը: Անձի ինքնագիտակցությունը իր մասին ունեցած պատկերացումների և սեփական անձին տրված զնահատականների համակարգն է: Ինքնագիտակցությունը հոգեբանական մի համակարգ է, որը սկսվում է ձևավորվել անհատի ծնվելուց անմիջապես հետո և հետագա տարիների ընթացքում: Երեխայի մեջ ինքնագիտակցության առկայության համոզիչ նշաններից մեկն այն է, որ նա ընդունում է իր անունը, սկսում է օգտագործել «ես» դերանունը և իրեն, իր մարմինն ու այն, ինչ հասկանում է «ես» ասելով, քիչ թե շատ հստակորեն տարբերում է մյուս մարդկանցից: «Ես»-ի և նրանից դուրս գտնվող աշխարհի հստակ տարբերակումը անձի զարգացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է²:

Էթնիկ ինքնագիտակցության, իսկ ավելի ուշ նաև էթնոցենտրիզմի խնդիրների ըմբռնմանը կօգնի մի ավելի ընդհանուր երևույթի՝ խմբակենտրոնության մասին պատկերացում ունենալը:

Երբ որևէ սոցիալական խումբ առանձնանում է մյուսներից, ապա նրանում կարճ ժամանակ անց ծագում է «մենք»-ի ընկալումը: Խմբի յուրաքանչյուր անդամ սկսում է իր խմբի մյուս անդամներին՝ «յուրայիններին», տարբերել օտարներից: Երբ արդեն կա «մենք»-«նրանք» հարաբերության հատուկ գիտակցում, ապա դա նշանակում է, որ խմբերը հստակորեն ոչ միայն տարածականորեն, այլև հոգեբանորեն, տարբերակված են: Տարբերակումը կատարվում է նույնիսկ ամենապարզ ու տարրական հատկանիշների հիման վրա: Երբ այն արդեն կատարվել է, խմբի յուրաքանչյուր անդամ սկսում է դրական գծեր վերագրել իր խմբին և հիմնականում բացասական՝ մյուս խմբին, առավել ևս, եթե այն ընկալվում է որպես հակառակորդ կամ մրցակից: Չկատարվում է դրական դիրքորոշում սեփական խմբի և բացասական՝ հակառակորդ խմբի նկատմամբ: Աստիճանաբար ծագում են նաև խմբային սիմվոլներ և ատրիբուտներ³: Այսպիսով, եթե խմբերը սահմանազատվում են նույնիսկ լոկ արտաքին նշանների հիման վրա, ապա միևնույն է, ծագում են սոցիալ-հոգեբանական նոր երևույթներ՝ «մենք» և «նրանք», և այդ հասկացությունները աստիճանաբար լցվում են նորանոր բովանդակություններով:

Ինչպես տեսանք, երբ որևէ խումբ է առաջանում, ապա ժամանակի ընթացքում նրա անդամները ձեռք են բերում խմբային ինքնագիտակցություն, «մենք»-ի՝ խմբին պատկանելու զգացում: Նույնը կատարվում

¹ 2009-2010 ուս.տ. ԳԳ-ում ուսում ստացող օտարերկրացի ուսանողների թիվը 3089-ն է:

² Նալչաջյան Ա., էթնիկ հոգեբանություն, Երևան, 2001, էջ 48:

³ Նույն տեղում էջ 51:

Գրիգորյան Խորեն

ԵՊԳ պատմության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս

«ՄԵՆՔ» ԵՎ «ՆՐԱՆՔ» ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ (Հարցումը՝ ուսանողության շրջանակներում)

Հայաստանի Հանրապետությունը էթնիկ տեսանկյունից լինելով առավել միատարր՝ այնքան էլ ակնառու չէ, թե ի՞նչ մակարդակի վրա է գտնվում «մենք»-ի և «նրանք»-ի սահմանազատումը մեր էթնիկ ինքնագիտակցության մեջ: Քանի որ այսօր մեր երկրում սովորում են օտարերկրացի ուսանողներ, գտնում ենք, որ հենց մեր և նրանց ուսանողների/շփումների շրջանակներում էլ կարելի է պարզել, թե ինչ մակարդակ

է նաև էթնիկական խմբերի կյանքում: էթնիկական «ես»-ի և «մենք»-ի երևույթը պետք է դիտել.

- Անձի առանձին մակարդակում
- Ամբողջ էթնոսի մակարդակում
- էթնոսի կազմում գտնվող տարբեր խմբերի, օրինակ՝ ընտանիքի մակարդակում:

Սեփական և օտար խմբերի վերաբերյալ խոսքով արտահայտված կարծիքներն ու դիրքորոշումները հաճախ կապվում են վարքի հետ, դրսևորվում են որոշակի արարքներում: Մարդիկ ավելի շփվող են իրենց խմբի անդամների հետ, պատրաստ են օգնել նրանց և համագործակցել նույնիսկ այն դեպքում, երբ կոնկրետ անձինք իրենց անձանոթ են: Բավական է միայն իմանալ, որ այս մարդը «մերոնցից մեկն է»¹:

Մինչդեռ այլ խմբի՝ «նրանց» նկատմամբ վարքը կարող է այլ բնույթ ունենալ: Այն հիմնականում բացասական հուզական երանգ ունի, մանավանդ, եթե օտարների խումբը թշնամի է համարվում:

Այս դրական և բացասական դիրքորոշումների միջև կան հետաքրքրական տարբերություններ: Այն դեպքում, երբ «մեր» խումբը ընկալվում է որպես բազմազան, իր տարբեր վերագրումներով, ապա մյուսը՝ «նրանց» խումբը ընկալվում է ավելի կարծրատիպ ձևով, նրա բոլոր անդամներն ընկալվում են որպես իրար շատ նման անհատներ, բայց ոչ անհատականություններ:

Այսօր հաճախ մեզ հանդիպում են Հնդկաստանի, Ճապոնիայի, Չինաստանի, Իրանի երիտասարդ քաղաքացիներ, որոնք ուսում են ստանում մեր բուհերում: Ինչպիսի՞ հարաբերությունների մեջ են «նրանք» «մեզ» հետ, որտեղ է՞ սկսվում և որտեղ է՞ ավարտվում «մենք» և «նրանք» փոխհարաբերությունները: Որքանով ենք «մենք» օտար «նրանց» և՛ ընդհակառակը: Ինչպե՞ս է մեր երիտասարդությունը վերաբերվում մեր բուհերի օտարերկրացի ուսանողներին, նրանք ինչպե՞ս են վերաբերվում մեզ: Ի՞նչ գիտենք «մենք» «օտարների» մասին: Հետաքրքրող է նաև այն հարցի ուսումնասիրությունը, թե սփյուռքահայ ուսանողները ինչպիսի՞ հարաբերությունների մեջ են իրենց համակուրսեցի հայաստանաբնակ ուսանողների հետ, այդ հարաբերություններում ի՞նչ խնդիրներ են առաջանում, որոնք խոչընդոտում են միմյանց անխափան շփումը: Իհարկե այդ հարցերը պարզաբանելու համար կարևոր նախապայման է հանդիսանում երկու կողմերին էլ ուսումնասիրելը:

Այսօր մենք հաճախ ենք խոսում այն մասին, թե երանի ամբողջ

հայությունը լինի միասնական, ապրենք մեկ երկրում, կարճ ասած լինենք միասին. սակայն արդյոք մենք պատրաստ ե՞նք ընդունել մեր այն ազգակիցներին, ովքեր ծնվել, դաստիարակվել և կրթություն են ստացել հայկական հողից հեռու, արդյոք կարող ե՞նք նրանց համարել «մենք», ահա այս հարցերը կարիք ունեն մեկնաբանման: Նախ հետաքրքիր է պարզել, թե բացի միևնույն ծագման, ընդհանուր հայրենիքի կորստի ու հայկական արժատներ ունենալուց, մենք մեր ինքնագիտակցության մեջ ի՞նչ ենք հասկանում սփյուռքահայ ասելով: Մեր ինքնագիտակցության մեջ և հայաստանաբնակ և օտարերկրյա հայերին մենք հայ ենք անվանում, սակայն հենց այդ նույն ինքնագիտակցության մեջ էլ մենք առանձնացնում ենք իրարից՝ նրանց կոչելով. սիրիահայ, լիբանանահայ, տաճկահայ, ամերիկահայ և այլն: Այդպիսի առանձնացումների հետ մեր ինքնագիտակցության մեջ մենք ստեղծում ենք նաև խորթացում, քանի որ նրանց չնայած ասում ենք հայ, սակայն նշում ենք, որ նա հայաստանաբնակ չէ: Սա իհարկե այս հարցի ուսումնասիրության գործում կարևոր նշանակություն ունի, քանի որ հենց այդ ասպեկտն է առաջին հերթին հայաստանաբնակ հայերի կողմից հանդիսանում խորթացման ազդակ: Սրա առկայությունը, իհարկե, առաջացնում է որոշակի խորթություն, որը համեմայն դեպս անցանկալի է, քանզի միասնականությունից խոսելիս պետք չէ հաջորդ վայրկյանին սեփական ազգիդ տարբեր աշխարհագրական բաժանումների ենթարկել:

Ինչ վերաբերում է հակառակ կողմին, ապա պետք է նշել, որ մեր արտասահմանաբնակ ազգակիցները, նույնպես այդ առումով ունեն որոշակի բարդությամբ, որոնք, իհարկե, առաջ են գալիս փոխշփման առաջին իսկ օրվանից: Նախ եկեք պարզենք, թե ինչ է բարդությամբ: Ըստ կարլ Գուստավ Յունզի բարդությամբ «հոգեկան ամբողջություն է, որը գիտակցականի հսկողությունից դուրս է մնացել և շարունակում է իր գոյությունը հոգեկան սուբստանցիայի մութ շրջանակներում, այնտեղից սրանք կարող են ամեն թույլ արգելակել գիտակցության ակտիվությունը, կամ ազդել նրա վրա»¹: Իր ծագումով բարդությամբ հատուկ են այսպես կոչված հոգեկան ցնցումները (травма), էմոցիոնալ շոկը, որի շնորհիվ այն հոգեկան սուբստանցիայից «անջատվում», «առանձնանում» է: Կ. Գ. Յունզի կարծիքով բարդությամբ (комплекс) կարող է ձևավորվել ինչպես վերջին կոնֆլիկտներից ելնելով, այնպես էլ մանկական տարիքում՝ ինչ որ իրադարձություններից ելնելով²: Այնուամենայնիվ, բարդությամբ առաջնային պատճառը կայանում է հիմնականում նրանում, որ անհատը չունի հնարավորություն՝ հաստատել իր ամբողջությունը:

¹ Стефаненко Т. Г., Этнопсихология. – М.: Институт психологии РАН, 1999, с.

¹ Карл Густав Юнг, Дух и жизнь, перевод с немецкого Л. О. Аюпяна, Москва, 1996, с. 421.

² Նույն տեղում, էջ 423:

Առաջին հերթին, որպես բարդույթ հանդես է գալիս լեզուն¹, քանզի մեր արտասահմանաբնակ հայերը լեզվական որոշակի ընկճվածություն ունեն և նույնիսկ հարցումների ժամանակ նրանք ձգտում էին առավել հակիրճ պատասխանել հարցերին, հաճախ նրանք իրենց օտար են զգում, կաշկանդված, որն էլ առաջ է բերում նրանց մոտ «օտարի» զգացումը²: Բացի աշխարհագրական ինչ-որ տեղանվան հետ շաղկապելը, գոյություն ունի նաև այսպես կոչվող «սոցիալական դիստանցիան»: «Սոցիալական դիստանցիա» ասելով մենք հասկանում ենք հոգեբանական այնպիսի պատմեշ, որը հեշտացնում կամ խոչընդոտում է ինքնաբերական փոխներգործությունը³: Որքան փոքր է հոգեբանական տարածությունը, այնքան ավելի հեշտ է փոխադարձ ապրումակցում ունենալը և հակառակը: Իսկ հոգեկան մտերմությունը, սոցիալական դիստանցիան առաջ են գալիս շփման ժամանակ: Դրա բացակայությունը, իհարկե, առաջացնում է որոշակի խորթություն, մենք արտասահմանաբնակ հայերի համար «այնքան էլ հայ չենք» նրանք էլ՝ մեզ համար: Եվ դրա միակ բացատրությունը կայանում է նրանում, որ և հայաստանաբնակ և արտասահմանաբնակ հայերը ընդհանուր տեղեկություններից բացի առանձնապես ջանք չեն թափում ավելի մտերմ հարաբերություններ հաստատել իրենց ազգակիցների հետ, իհարկե բացառությամբ առանձին դեպքերի: Մի քանի սփյուռքահայ երիտասարդների հետ այդ հարցի շրջանակներում զրույցից պարզ դարձավ, որ այս «օտարի» կարգավիճակը նրանց մոտ ժամանակավոր բնույթ է կրում և երբ մեծանում է շփումների շրջանակը, ապա այն չքանում է: Նրանց համար նաև բարդ երևույթ է Հայաստանի մասին կարծրատիպերի հաղթահարումը: Ընդհանրապես էթնիկական կարծրատիպերը կարևոր գործառույթ են իրականացնում մարդու վարվելակերպի մեջ և օգնում են նրան կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում: Որպես էթնիկական կարծրատիպերի օրինակ կարելի է նշել ռուսների կարծրատիպային պատկերացումները չեչենների մասին: Ընդհանուր չեչենի կերպարը ռուսը բնութագրում է այսպես. մաշկի մուգ պիզմենտացիա, թավ մորուք, ազրեսիվ: Ահա այս երեք հատկանիշները ըստ ռուս ազգի բոլոր չեչեններն ունեն: Անգլիացիները իռլանդացիների՝ որպես կարծրատիպ ներկայացնում են ալկոհոլի շատ օգտագործումը, որը ըստ անգլիացու՝ հատուկ է բոլոր իռլանդացիներին: Ժամանակակից գերմանացու մասին, որպես կարծրատիպ է հանդես գալիս ճշտապահու-

թյունը¹: Նշենք նաև, որ կարծրատիպեր են առաջանում կրոնական հիմքի վրա: Ասենք օրինակ՝ սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ԱՄՆ-ի քաղաքացիները (ոչ մահմեդական) զգուշությամբ էին վերաբերվում մահմեդականներին. նրանց մոտ մահմեդականների հանդեպ նոր կարծրատիպ էր առաջացել. մահմեդականը մահապարտ-ահաբեկիչ է, վտանգավոր է և այլն: Մարդիկ կարծրատիպերին ծանոթանում են շատ վաղ, քանզի սրանք հանդիսանում են դաստիարակման համակարգի բաղկացուցիչ մաս²: Դրանք հիմնականում ընդհանուր են բոլոր ոչ հայաստանաբնակ հայերի համար: Այդպիսի կարծրատիպերից է օրինակ՝ Հայաստանը որպես «սրբատեղի» դիտարկելը³: Այդ կարծրատիպը առաջ է եկել տարիների ընթացքում Հայաստանից հեռու լինելու և այս երկիրը ենթագիտակցության մեջ առաջացած Հայաստանի և իրական Հայաստանի դեմ առ դեմ հանդիպման ժամանակ էլ ի հայտ են գալիս նորանոր բարդույթներ: Նրանց համար անհասկանալի է, թե ինչպես կարելի է անտարբեր քայլել այն երկրի փողոցներում՝ Մասիս լեռան տեսարանի ներքո, որն իրենց մեջ մանկության տարիներից երազանք է հանդիսացել⁴: Ոմանք կարող են համաձայն չլինել այս տեսակետների հետ պատճառաբանելով, թե այսօր տեղեկատվական լայն դաշտի շնորհիվ նրանք պատրաստ են եղել այս Հայաստանը տեսնելու, սակայն երազանքները, իդեալները գտնվում են ենթագիտակցության և ապա զարգանում ինքնագիտակցության մեջ, և ուրեմն տեղեկատվության առատությունը այստեղ անելու ոչինչ չունի: Առանձին ուշադրության է արժանի ՌԴ-ում և Վրաստանում բնակվող մեր հայրենակիցների վարքագիծը այս հարցի շրջանակներում: Մեր կողմից հարցվածները իրենց սփյուռքահայ չէին համարում և օտարություն չէին զգում հայաստանաբնակ հայերի կողմից: Նույնը կարելի է ասել նաև հայաստանաբնակների մասին. նրանք էլ հիմնականում օտարություն չէին տեսնում ռուսաստանաբնակ և վիրահայության կողմից: Դա բացատրվում է նրանով, որ տարբեր հարթություններում նշված երկրների հետ փոխհարաբերությունները գտնվում են առավել մտերմիկ դաշտում, և այս երկրների քաղաքացիները (ի նկատի ունենք տեղաբնիկներին) մյուս երկրների ազգերից առավել մոտիկ են ընկալվում մեր կողմից: Նշված հարցը ևս

¹ Бромлей Ю. В., Очерки теории этноса. М.: Наука, 1983, с. 179.

² Էթնիկ ինքնագիտակցության մեջ լեզվի դերի նշանակության մասին առավել մանրամասն տես՝ Арутюнов С. А., Рассы и народы, Этнические процессы и язык, т. 15, Москва, 1986, с. 30:

³ Տես՝ Նալչաջյան Ա., Երևան, 2001, էջ 62:

¹ Նշել ենք ժամանակակից, քանի որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետո գերմանացիների մասին կարծրատիպ էր հանդիսանում ֆաշիզմը:

² Шнирельман В. А., Проблема доклассового и раннеклассового этноса в зарубежной этнографии, М., 1982, с. 239.

³ Агеев В. С., Стереотипизация как механизм социального восприятия // Общение и оптимизация совместной деятельности / Под ред. Г. М. Андреевой, Я. Яноушека. М., 1987, с. 177-188.

⁴ Վերագրման տեսության մանրամասն նկարագրությունը տես՝ Хакхаузен Х., Мотивация и деятельность, ч. 2, М., 1986.

ունի առավել մանրամասն ուսումնասիրման կարիք, մենք ուղղակի արձանագրում ենք տվյալ իրավիճակը:

Այնուամենայնիվ, եթե արտասահմանաքննակ հայերի մոտ այդ «օտարի» զգացումը ժամանակավոր բնույթ է կրում և այն հետզհետե անհետանում է հայաստանաքննակների հետ երկար շփման շնորհիվ, ապա օտարերկրացի ուսանողների մոտ «օտար»-ի զգացումը մնում է, քանի որ առաջին հերթին նրանք իրենց ինքնագիտակցության մեջ փոխարարձաբար մեզ ընկալում են՝ «ուրիշներ»¹:

Ինչ վերաբերում է Հայաստանի օտարերկրյա ուսանողներին, կարելի է ասել, որ «նրանք» մինչև իրենց ուսումնառության վերջին օրը մնում են մեզ համար «օտար»: Այդ «օտարի» մասին մենք պատկերացումներ ենք հավաքում մեր ամենօրյա կյանքի ընթացքում: Տարբեր լեզուներով խոսելը, տարբեր մշակույթների ներկայացուցիչ լինելը՝ արդեն առաջ են բերում մի պատմեջ: «Նրանք» մեզ համար «օտարներ» են նույնիսկ նախքան Հայաստան ժամանելը, քանի որ մենք մեր ենթացիտակցության մեջ ունենք «մենք»-ի և «նրանց» մասին հստակ պատկերացումներ: Այդ պատկերացումները ինքնագիտակցության մեջ վերածվում են կարծրատիպերի և ի վերջո դա էլ հանդիսանում է «նրանց» նկարագրման առաջին հիմնական ազդակը²: Մենք էլ «օտար» ենք նրանց համար նույն հանգամանքներից ելնելով և դա էլ հանդիսանում է մեր և նրանց հարաբերությունների գլխավոր խոչընդոտը: Հարցումների ժամանակ չինացի ուսանողուհին կասկածամտորեն էր պատասխանում հարցերին՝ պարզ ցույց տալով, որ ես իր կողմից որպես «օտար» եմ ընկալվում, չնայած մինչև հարցումները նրան տեղեկացված էր այդ հարցումների նպատակի մասին: Այդ նույն ընդհանուր պատկերն էր և ճապոնուհու և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների հետ զրույցների ժամանակ³: Համեմատության համար նշենք, որ երբ զրուցում էի անծանոթ հայ ուսանողուհու հետ, նրա կողմից այդ «օտար»-ի հայացքը բացակայում էր, պարզ բան է՝ «մենք» մի ազգի ներկայացուցիչ ենք: Հարցումների շրջանակներում զրույցներ եղան այն հայ ուսանողների հետ, որոնք «ուսանողների փոխանակություն» ծրագրերի շրջանակներում եղել էին արտասահմանում: Նրանք զարմանքով էին պատմում այս կամ այն երկրում իրենց կողմից նկատված «տարօրինակ» երևույթների մասին, չնայած նրանք նաև նշում էին, որ մինչև որևէ երկիր ժամանելը նրանց այդ երկրի ժողովրդի սովորույթ-

¹ Քանի որ գրավոր հարցումները կարող էին առաջացնել խոչընդոտներ, օգտվել ենք հետգրառման մեթոդից:

² Стефаненко Т. Г., Методы исследования этнических стереотипов // Стефаненко Т. Г., Шлягина Е. И., Ениколопов С. Н., Методы этнопсихологического исследования. М.: Изд-во М., 1993, с. 3-27.

³ Անունները չեն նշված, քանի որ հարցվածները հանդես են գալիս որպես առանձին ազգերի ներկայացուցիչներ:

ների մասին սովորաբար ներկայացրել են: Հայ ուսանողները այդ երկրներում «տարօրինակ» էին համարում այն ամենը ինչ չկա մեր երկրում և մեր ուսանողների ամենահետաքրքիր նախադասություններից էր. «Նրանք աշխարհագրություն չգիտեն, նրանք չգիտեն Հայաստանի տեղը» կամ «Նրանք պատմություն չգիտեն, մտածում են «մենք» Ռուսաստանի կազմում ենք»: Այս երկու կարծիքներն էլ համեմատական նշանակություն ունեն և այսպիսի արտահայտումը ցույց է տալիս «մենք»-ի վրդովմունքը, այսինքն՝ եթե «մենք» գիտենք ճապոնիայի, Չինաստանի կամ Հնդկաստանի աշխարհագրական տեղը, եթե «մենք» գիտենք, որ ճապոնացին և չինացին տարբեր ազգեր են, իսկ «նրանք» Հայաստանի տեղը չգիտեն, չգիտեն, որ հայն ու ռուսը տարբեր էթնիկ հանրություններ են, նշանակում է, որ «նրանք» ո՛չ աշխարհագրություն գիտեն, ո՛չ էլ՝ պատմություն: Ահա դա է վերևում նշված երկու նախադասությունների ամբողջ նկարագիրը:

Այսպիսով՝ էթնիկ ինքնագիտակցության մեջ առանձին տեղ ունեցող «մենք»-«նրանք» հարաբերությունները մեր համար առանձնահատուկ նշանակություն ունեն, քանի որ մեր երկիրը էթնիկ տեսանկյունից զրեթե միատարր է և ամենօրյա շփում չունենք այլ էթնոսի ներկայացուցիչների հետ: Մեզ հանդիպող օտարերկրացիները մեծմասամբ ուսանողներ են և հենց դրա համար էլ ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել «մենք» և «նրանք» ուսանողական փոխհարաբերությունները: Արդիական խնդիր է հանդիսանում այն, որ Հայաստանի Հանրապետությունում ուսման նպատակով գտնվող օտարերկրացի ուսանողները տեղեկացված չեն մեր պատմության, սովորությանի մասին: Արդիական խնդիր է նաև այն, որ մեր արտասահմանաքննակ հայերը Հայաստանում ուսումնառության ընթացքում քիչ են շփվում հայաստանաքննակ ուսանողության հետ, որն էլ առաջ է բերում որոշակի օտարացվածություն: Նշված խնդիրները կարիք ունեն առավել մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրության:

Annotation

From the point of view of ethnic identity the RA is more monolithic that's why it isn't so visible the acceptance of a foreigner in the society. For the interpretation of the subject it is more reasonable to make studies among the students in the RA, as there are some existing relationships between the Armenian students and the students from foreign countries.

It is also an important problem to examine the relationships of the Armenians from Armenia and those from Diaspora. The above mentioned problems are actual today and need further more detailed investigation.

Аннотация

С этнической точки зрения РА более монолитный, поэтому в обществе не так уж видно восприятие „чужого”. Для выяснения этого более целесообразно изучение среди студентов Армении, так как здесь представлены иностранные студенты. И это создает среду взаимоотношений.

Важная проблема еще и взаимоотношения местных и армян диаспоры, которые сложны и находятся в сфере изучения. Все эти проблемы считаются современными и нуждаются в более подробном изучении.